



COVID-19-ի դեմ Պատվաստումը Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ (FAQ) ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



5-17 տարեկան երեխաները իրավասու են պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութով:

Պատվաստումները մշտապես անվճար են:

Ոչ ձեռք, ոչ էլ ձեռք երեխային չեն հարցնի ներգաղթի կարգավիճակի մասին: Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կամ [VacunateLosAngeles.com](https://www.vacunatelosangeles.com) (Իսպաներեն) պատվաստում գտնելու համար:

Ինչո՞ւ պետք է իմ երեխան պատվաստվի COVID-19-ի դեմ

Ձեր երեխային (երեխաներին) պատվաստելը նրան(ց) COVID-19-ից պաշտպանելու լավագույն միջոցն է: Թեև COVID-19-ը երեխաների մոտ հաճախ ավելի թեթև է ընթանում, քան մեծահասակների մոտ, նրանք նույնպես կարող են ծանր հիվանդանալ: Որոշ երեխաներ կարող են հիվանդանոցային խնամքի կարիք ունենալ և նույնիսկ կարող են մահանալ <<Բազմահամակարգային Բորբոքային Համախտանիշից>> (MIS-C): Սա մի վիճակ է, երբ մարմնի տարբեր մասեր կարող են բորբոքվել, ներառյալ սիրտը, թոքերը, երիկամները, ուղեղը, մաշկը, աչքերը կամ աղեստամոքսային համակարգը: Բացի այդ, վարակվող որոշ երեխաներ ունենում են երկարատև առողջական բարդություններ (կոչվում է երկարատև COVID): Երկարատև COVID ունեցող երեխաները կարող են զգալ հոգևածություն, ունենալ գլխացավեր և կենտրոնանալու հետ կապված դժվարություններ: Սա կարող է տևել շաբաթներ կամ ամիսներ COVID-19-ով վարակվելուց հետո: Որևէ կերպ հնարավոր չէ նախապես ասել՝ արդյոք երեխայի մոտ COVID-19-ը ծանր կընթանա, թե նրա մոտ կդրսևորվի երկարատև COVID:

Ձեր երեխայի լիովին պատվաստվելուց հետո նրա համար ավելի անվտանգ կլինի կանոնավոր գործողություններին մասնակցելը: Ավելի անվտանգ կլինի ընկերների հետ շփվելը, առանց բացակայության դպրոց հաճախելը, սպորտով զբաղվելը և ընտանիքը տեսնելու նպատակով ճանապարհորդելը: Նրանից չի պահանջվի թեստավորվել որոշ մարզաձևերով զբաղվելու կամ մեծ միջոցառումների մասնակցելու համար: Նրանից չի պահանջվի նաև կարանտին պահպանել COVID-19-ի վարակակրի հետ շփվելու դեպքում, եթե նա անխտանիշներ չունենա: Սա ներառում է վարակակրի հետ շփումը դպրոցում, տանը, խմբային մարզաձևով զբաղվելիս կամ ճանապարհորդությունից հետո:

Ձեր երեխային պատվաստելը օգնում է պաշտպանել նաև ընտանիքի անդամներին և ընկերներին: Սա հատկապես օգտակար է այն մարդկանց պաշտպանելու համար, որոնք պատվաստված չեն (օրինակ՝ մինչև 5 տարեկան երեխաները) և նրանց, որոնք վարակվելու դեպքում գտնվում են ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի ներքո, օրինակ՝ [տարեցները](#) և [որոշակի առողջական խնդրներ ունեցող անձինք](#):

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի [COVID-19-ի դեմ Պատվաստումը Երեխաների և Պատանիների համար](#):

COVID-19-ի դեմ ո՞ր պատվաստանյութով կարող է իմ երեխան պատվաստվել

5 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութի իրենց տարիքին համապատասխան դեղաչափով:

- 12 տարեկան և ավելի բարձր տարիքի պատանիները պատվաստվում են նույն Pfizer պատվաստանյութով, որով պատվաստվում են մեծահասակները:





COVID-19-ի Դեմ Պատվաստումը Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ (FAQ) ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



- 5-11 տարեկան երեխաները պատվաստվում են իրենց տարիքային խմբի համար պատրաստված Pfizer պատվաստանյութով: Այն պարունակում է միլևոյն ակտիվ բաղադրիչը, սակայն ավելի փոքր (1/3-րդ) չափաբաժնով, քան սովորական Pfizer պատվաստանյութը, և ներարկվում է ավելի փոքր ասեղով:

Պատվաստանյութի երկու տարբերակներն էլ տրվում են 2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ: Կարևոր է ստանալ երկրորդ դեղաչափը պատվաստանյութից լիարժեք պաշտպանություն ստանալու համար: Ձեր երեխան լիովին պատվաստված է երկրորդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց:

Moderna և Johnson & Johnson պատվաստանյութերը հասանելի չեն 18 տարեկանից ցածր երեխաների համար: Այս երկու պատվաստանյութերն էլ ներկայումս թույլատրված են միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց:

Pfizer պատվաստանյութերի մասին ավելին իմանալու համար տե՛ս Պատվաստվողների և Խնամողների Տեղեկատվական Թերթիկը՝

- [12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց](#) համար
- [5-11 տարեկան երեխաների](#) համար

Որո՞նք են պատանիների մոտ դրսևորվող կողմնակի ազդեցությունները

Պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները միանման են երեխաների և մեծահասակների մոտ: Դրանք կարող են ներառել կարմրություն և ձեռքի ցավ, հոգևածության զգացողություն, գլխացավ, մկանային ցավեր, ջերմություն կամ դող: Այդ կողմնակի ազդեցությունները կարող են սահմանափակել ամենօրյա որոշակի գործողությունները, սակայն պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ: Այդ կողմնակի ազդեցությունները բնական են և ցույց են տալիս, որ մարմինը ստեղծում է դիմադրողականություն:

Ո՞ր պատվաստանյութով պետք է պատվաստվի իմ երեխան, եթե նրա 12 տարին լրանում է նախքան երկրորդ դեղաչափը ստանալը

Պատվաստումների վերաբերյալ հորդորները հիմնված են երեխայի տարիքի, այլ ոչ քաջի վրա: Եթե ձեր երեխան 11 տարեկան է, նա պետք է ստանա մանկական պատվաստանյութը, անկախ նրանից, թե երբ է լրանում նրա 12 տարին: Այն անվտանգ է և արդյունավետ այդ տարիքային խմբի համար: Եթե ձեր երեխան շուտով դառնում է 12 տարեկան, մենք խորհուրդ չենք տալիս սպասել նրա ծննդյան օրվան՝ պատվաստումը ստանալու համար:

Եթե ձեր երեխան դառնում է 12 տարեկան առաջին դեղաչափից հետո, նա պետք է ստանա երկրորդ դեղաչափը 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար նախատեսված պատվաստանյութից: Սակայն, եթե նա ստանում է 5-11 տարեկանների չափաբաժինը, ապա կարիք չկա կրկնելու այն:

Ինչո՞ւ է պատվաստանյութը նախատեսված միայն 5 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաների համար: Ե՞րբ կկարողանան պատվաստվել ավելի փոքր տարիքի երեխաները

5 տարեկանից փոքր երեխաները չեն կարող պատվաստվել, քանի որ այդ տարիքային խմբում դեռ





COVID-19-ի Դեմ Պատվաստումը Պատանիների Համար ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ (FAQ) ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ



իրականացվում են կլինիկական հետազոտություններ: Դեռևս բավարար տեղեկություններ չկան այն մասին, թե ինչպես են այս պատվաստանյութերը ազդում 6 ամսականից մինչև 5 տարեկան երեխաների վրա:

Որտե՞ղ կարող եմ պատվաստել իմ երեխային

Պատվաստանյութերը հասանելի են Լոս Անջելեսի Շրջանի հարյուրավոր վայրերում: Այդ վայրերը ներառում են մանկաբուժական հիմնարկները, կլինիկաները, դեղատները, դպրոցները, COVID-19-ի դեմ պատվաստման հատուկ տեղանքները և շարժական կայանները: Շատ վայրերում ձեզ անհրաժեշտ չէ ժամադրվել: Հետևեք ձեր հարևանությամբ գործող պատվաստման կլինիկային:

Հասանելի է նաև տնային պատվաստում այն անձանց համար, որոնք չեն կարող լքել տունը: Ավելին իմանալու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) և սեղմեք <<[ինչպես Պատվաստվել](#)>>: Կարող եք նաև զանգահարել Պատվաստումների Չանգերի Կենտրոն 833-540-0473 հեռախոսահամարով: Այն գործում է ամեն օր առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը և կարող է կազմակերպել անվճար փոխադրում դեպի պատվաստման վայր: Ընտրեք այնպիսի վայր, որտեղ առաջարկվում է ձեր երեխայի տարբին համապատասխանող Pfizer պատվաստանյութը:

Ի՞նչ փաստաթղթեր պետք է բերեմ իմ երեխային պատվաստելու համար

5-17 տարեկան երիտասարդներին անհրաժեշտ է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը պատվաստվելու համար: Ընտանիքները պետք է ստուգեն համաձայնության ձևին վերաբերող պահանջները այն վայրում, ուր նրանք նախատեսում են գնալ: Ստուգեք էլեկտրոնային փոստը կամ տեքստային հաղորդագրությունը, որը ստացել եք ժամադրվելիս, որպեսզի իմանաք, թե ինչ փաստաթղթեր պետք է բերեք: Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության պատվաստումների կենտրոններին վերաբերող պահանջների մասին տեղեկությունների համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.gov) կայքէջը կամ զանգահարեք Պատվաստումների Չանգերի Կենտրոն (տե՛ս վերևում):

Իմ երեխան ունի իմունային անբավարարություն: Կարո՞ղ է նա ստանալ Pfizer պատվաստանյութի 3-րդ դեղաչափը

Դա կախված է նրա տարիքից: Եթե ձեր երեխան 12 տարեկան է կամ ավելի մեծ և ունի [միջին կամ խստորեն թուլացած իմունային համակարգ](#), խորհուրդ է տրվում, որ նա ստանա Pfizer պատվաստանյութի 3-րդ դեղաչափը: Նա պետք է ստանա իր 3-րդ դեղաչափը 2 դեղաչափից բաղկացած հիմնական պատվաստանյութի շարքն ավարտելուց առնվազն 28 օր անց: 3-րդ դեղաչափը ներկայումս խորհուրդ չի տրվում 12 տարեկանից փոքր երեխաներին: Խթանիչ դեղաչափը խորհուրդ չի տրվում 18 տարեկանից ցածր տարիքի անձանց: Խոսեք ձեր երեխայի բժշկի հետ լրացուցիչ դեղաչափ ստանալու մասին:

Տե՛ս CDC-ի կայքէջը [COVID-19-ի Դեմ Պատվաստումի Միջին և Խիստ Իմունային Անբավարարություն Ընկեցող Մարդկանց Համար](#):





Կարո՞ղ է իմ երեխան միաժամանակ պատվաստվել COVID-19-ի և ուրիշ հիվանդությունների դեմ

Այո: 5 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաները կարող են ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութն այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ, ինչպիսիք են գրիպի, կարմրուկի և կապույտ հազի պատվաստանյութերը: Եթե ձեր երեխան պատվաստվում է COVID-19-ի դեմ այնպիսի վայրում, որտեղ չեն տրամադրում այլ պատվաստանյութեր, որոնք, հնարավոր է, անհրաժեշտ են երեխային, կարող եք ցանկացած ժամանակ գնալ այլ վայր՝ դրանք ստանալու համար: Պատվաստումների միջև անհրաժեշտ չէ սպասել:

Կարո՞ղ են ալերգիաներ ունեցող երեխաները պատվաստվել COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութով

Դա կախված է տարբեր հանգամանքներից.

- Երեխաները, որոնք ալերգիա ունեն բերանով ընդունվող դեղամիջոցներից, սննդից (ներառյալ ձվերը), լատեքսից, ընտանի կենդանիներից կամ ծաղկափոշուց կամ այն անձինք, որոնք ունեն ընտանեկան ալերգիայի պատմություն, կարող են պատվաստվել: Պատվաստանյութը չի պարունակում ձու, լատեքս կամ կոնսերվանտներ: Կարող եք տեսնել բաղադրիչների ցանկը Պատվաստվողների և Խնամողների Տեղեկատվական Թերթիկում՝ [Pfizer 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց](#) և [Pfizer 5-11 տարեկան երեխաների](#) համար:
- Խոսեք ձեր բժշկի հետ, եթե ձեր երեխան ունեցել է ալերգիկ հակազդեցություն պատվաստանյութից կամ ներարկումից (անգամ եթե հակազդեցությունը ծանր չէ): Նա կօգնի որոշել՝ արդյոք երեխայի համար անվտանգ է պատվաստվելը:
- Պոլիէթիլենային գլիկոլից (PEG) ալերգիա ունեցող երեխաները չպետք է պատվաստվեն Pfizer պատվաստանյութով:

Ցանկացած պատվաստանյութի դեպքում առկա է անաֆիլաքսիայի (ծանր ալերգիկ հակազդեցություն) կամ այլ հակազդեցությունների փոքր վտանգ: Սա է պատճառը, որ COVID-19-ի դեմ պատվաստված բոլոր անձինք պատվաստումից հետո որոշ ժամանակ գտնվում են հսկողության ներքո:

Ալերգիկ հակազդեցությունների վերաբերյալ տեղեկությունները կարող են փոփոխվել: Ամենաթարմ ուղեցույցին ծանոթանալու համար ստուգեք CDC-ի [COVID-19-ի Դեմ Պատվաստանյութն Ալերգիա Ունեցող Անձանց համար](#) կայքէջը և խոսեք ձեր բժշկի հետ:

Իմ երեխան արդեն վարակվել է COVID-19-ով, արդյո՞ք նա պետք է պատվաստվի

Այո: Ձեր երեխան պետք է պատվաստվի, նույնիսկ եթե արդեն վարակվել է COVID-19-ով: Մենք դեռ չգիտենք, թե COVID-19-ով վարակվելուց հետո որքան ժամանակ է անձը պաշտպանված: COVID-19-ով վարակվելուց հետո պատվաստվելը կամրապնդի ձեր երեխայի դիմադրողականությունը (immunity): Այն երեխային կտա ավելի երկար պաշտպանություն COVID-19-ից: Դա ներառում է պաշտպանություն վիրուսի ավելի վարակիչ ենթատեսակներից, որոնք կարող են ավելի հեշտությամբ տարածվել և ավելի ծանր հիվանդություններ առաջացնել:

Արդյո՞ք անվտանգ է 5-17 տարեկան երեխաների պատվաստումը

Այո: Մանրակրկիտ կլինիկական փորձարկումներից հետո COVID-19-ի դեմ Pfizer-ի ստեղծած պատվաստանյութը (նույն պատվաստանյութն արդեն ապահով կերպով ներարկվել է 16 տարեկան և





ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ (FAQ) ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ավելի բարձր տարիքի միլիոնավոր մարդկանց) մայիս ամսին թույլատրվել է FDA-ի կողմից 12-ից 15 տարեկան պատանիներին պատվաստելու համար: Հոկտեմբերին այն թույլատրվել է 5-11 տարեկան երեխաներին պատվաստելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութն [անվտանգ](#) և [արդյունավետ](#) է 5-17 տարեկան երեխաների, ինչպես նաև մեծահասակների համար: Պատվաստանյութն այժմ ստացել է FDA-ի լիարժեք հաստատումը 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, և դրա անվտանգությունը շարունակում է վերահսկվել:

Ծնողները կարող են ունենալ մտահոգություններ՝ կապված սրտամկանի բորբոքման ([միոկարդիտ](#)) կամ սրտի արտաքին թաղանթի՝ սրտապարկի (պերիկարդիտ) բորբոքման դեպքերի հետ այն մարդկանց շրջանում, որոնք պատվաստվել են Pfizer պատվաստանյութով: Դեպքերի մեծ մասը եղել է արական սեռի դեռահասների և երիտասարդների շրջանում և տեղի է ունեցել պատվաստումից հետո մի քանի օրվա ընթացքում: Այդ հակազդեցությունները հազվադեպ են. պատվաստված մեկ միլիոն անձանց շրջանում հաշվարկվել է 60-ից պակաս այդպիսի դեպք: Քանի որ կլինիկական փորձարկումներում 5-11 տարեկան երեխաների շրջանում միոկարդիտի դեպքեր չեն գրանցվել, 5-11 տարեկան երեխաների մոտ պատվաստումներից հետո միոկարդիտի առաջացման մակարդակը հայտնի չէ, սակայն այն, հավանաբար, նույնիսկ ավելի ցածր կլինի այս տարիքային խմբում պատվաստանյութի ավելի փոքր չափաբաժնի պատճառով և այն հանգամանքով պայմանավորված, որ միոկարդիտը տարածված չէ ավելի երիտասարդ տարիքային խմբում:

Եթե ձեր երեխայի կամ որևէ անձի մոտ դրսևորվում է հետևյալ ախտանիշներից որևէ մեկը, խորհուրդ է տրվում անմիջապես դիմել բուժօգնության.

- Ցավ կրծքավանդակում
- Շնչարգելություն
- Արագ սրտխփոցի, սրտի բաբախի կամ սրտի արագ զարկի զգացողություն:

Պատվաստումից հետո միոկարդիտի և պերիկարդիտի դեպքերի մասին հաղորդած հիվանդների մեծամասնությունը, որոնք ստացել են բուժօգնություն, ապաքինվել են դեղորայքի և հանգստի միջոցով, և նրանց ինքնազգացողությունը արագ բարելավվել է: Կարևոր է նշել, որ միոկարդիտը և պերիկարդիտը ավելի հաճախ հանդիպում են COVID-19-ով հիվանդ մարդկանց մոտ: Իսկ սրտի համար COVID-19-ի վարակի վտանգները կարող են ավելի ծանր լինել: Իմացեք ավելին CDC-ի կայքէջում [Միոկարդիտ և Պերիկարդիտ COVID-19-ի Դեմ mRNA-ով Պատվաստումից Հետո](#):

Մեկ այլ հազվադեպ կողմնակի ազդեցություն է անաֆիլաքսիան: Անաֆիլաքսիան լուրջ ալերգիկ հակազդեցություն է, որը կարող է դրսևորվել ցանկացած պատվաստումից հետո: COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո յուրաքանչյուր անձ կարճ ժամանակով գտնվում է հսկողության ներքո: Անաֆիլաքսիայի դրսևորման դեպքում այն հնարավոր է անմիջապես բուժել: Իմացեք ավելին CDC-ի կայքէջում [Ինչ Անել, Եթե COVID-19-ի Դեմ Պատվաստվելուց Հետո Ձեզ Մոտ Դրսևորվել է Ալերգիկ Հակազդեցություն](#):

CDC-ն հորդորում է [պատվաստել COVID-19-ի դեմ](#) 5 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց: COVID-19 հիվանդության հայտնի վտանգները, ներառյալ հոսպիտալացումը, երկարատև առողջական խնդիրները և մահը, գերազանցում են պատվաստման արդյունքում հազվադեպ դրսևորվող բացասական հակազդեցությունների հնարավոր ռիսկերը:





Կարո՞ղ է իմ երեխան COVID-19- դեմ պատվաստանյութից վարակվել COVID-19-ով

Ոչ: Ձեր երեխան չի կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Դա հնարավոր չէ: Միացյալ Նահանգներում COVID-19-ի դեմ օգտագործվող պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ի հարուցիչ վիրուսը որևէ ձևով:

Արդյո՞ք պատվաստանյութը առաջացնում է անպտղություն

Ոչ: Չկա որևէ կենսաբանական պատճառ կամ ապացույց, որ որևէ պատվաստանյութ առաջացնում է պտղաբերության հետ կապված որևէ խնդիր կանանց կամ տղամարդկանց մոտ: Դա ներառում է COVID-19-ի դեմ պատվաստանյութերը: Որոշ մարդիկ, որոնք պատվաստվել են COVID-19-ի դեմ պատվաստանյութերի կլինիկական փորձարկումների շրջանակում, և շատ մարդիկ, որոնք պատվաստվել են փորձարկումներից հետո, հղիացել են: Պատվաստանյութերը չեն փոխում մարդու ԴՆԹ-ն, և չկա որևէ ապացույց, որ դրանք ազդում են դեռահասների զարգացման վրա:

Կարո՞ղ է COVID-19-ի դեմ պատվաստումը ազդել իմ երեխայի դաշտանային ցիկլի վրա

Որոշ մարդիկ հայտնել են պատվաստվելուց հետո իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին, ներառյալ ավելի շատ հոսքի և ցավոտ կծկումների մասին: Մենք դեռ չգիտենք՝ արդյոք այդ փոփոխությունները պայմանավորված են պատվաստմամբ, թե ոչ: Դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին չի հաղորդվել պատվաստումների փորձարկումների ժամանակ, և այս հարցի վերաբերյալ դեռևս ուսումնասիրության արդյունքներ չկան: Կարևոր է հիշել, որ շատ հանգամանքներ կարող են ազդել դաշտանային ցիկլերի փոփոխության վրա: Դա ներառում է լարվածությունը, քնի, սննդակարգի, վարժությունների և որոշ դեղորայքի փոփոխությունները: Անկանոն դաշտանային ցիկլերը շատ տարածված են դեռահասների շրջանում: Եթե ձեր երեխան ունի իր ցիկլի հետ կապված մտահոգություններ, խորհուրդ է տրվում, որ նա խոսի իր բժշկի հետ:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստանյութերը կունենան որևէ երկարատև կողմնակի ազդեցություն իմ երեխայի վրա

Ոչ, դա չպետք է տեղի ունենա: Ելնելով նրանից, թե մենք ինչ գիտենք մյուս պատվաստանյութերի ազդեցություններից՝ ցանկացած հազվադեպ կողմնակի ազդեցություն սովորաբար սկսվում է պատվաստվելուց հետո վեց շաբաթվա ընթացքում: Այդ իսկ պատճառով Մենդամթերքի և Դեղորայքի Վարչությունը (FDA) պահանջել է, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերից յուրաքանչյուրն ուսումնասիրվի վերջին դեղաչափի ներարկումից հետո առնվազն ութ շաբաթ՝ նախքան օգտագործելու թույլտվություն տրամադրելը: Օգտագործման թույլտվություն ստանալուց հետո CDC-ն շարունակում է վերահսկել COVID-19-ի դեմ պատվաստանյութերը: Անվտանգության հետ կապված խնդիր առաջանալու դեպքում FDA-ն և պատվաստանյութն արտադրողը համագործակցում են անվտանգության հետ կապված խնդիրները լուծելու համար: Օրինակ՝ որոշակի խմբաբանակի հետ կապված խնդիր, արտադրական խնդիր կամ հենց պատվաստանյութի հետ կապված խնդիր: Ձեր երեխայի մոտ ավելի մեծ հավանականությամբ կդրսևորվեն երկարաժամկետ կողմնակի ազդեցություններ COVID-19-ով վարակվելու, քան COVID-19-ի դեմ պատվաստվելու հետևանքով:

Եթե պատվաստվելուց հետո իմ երեխայի մոտ դրսևորվում է բացասական արձագանք (հնարավոր կողմնակի ազդեցություն), ինչպե՞ս պետք է հայտնեմ դրա մասին

Եթե պատվաստումից հետո ձեր երեխայի մոտ դրսևորվում է բացասական արձագանք, խոսեք ձեր բժշկի հետ և բացասական արձագանքի մասին հաղորդեք Պատվաստումների Բացասական





ՀԱՃԱԽ ՏՐԿՈՂ ՀԱՐՑԵՐ (FAQ) ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հետևանքների մասին Հաղորդման Համակարգին (VAERS): Հաղորդեք դրա մասին, նույնիսկ եթե վստահ չեք, որ այն առաջացել է պատվաստման հետևանքով: VAERS -ը վաղ նախազգուշացման համակարգ է, որը FDA- ն և CDC- ն օգտագործում են անվտանգության հետ կապված հնարավոր խնդիրները հայտնաբերելու համար: Հաղորդելու համար զանգահարեք 1-800-822-7967 հեռախոսահամարով կամ այցելեք <https://vaers.hhs.gov/reportevent.html> կայքէջ:

Եթե ունեք սմարթֆոն, կարող եք օգնել CDC-ին վերահսկել պատվաստանյութերը՝ գրանցելով ձեր երեխային [V-Safe](#)-ում: **V-safe**-ը սմարթֆոնով գործող հավելված է, որը տեքստային հաղորդագրություններ է ուղարկում ստուգելու ձեր երեխայի առողջական վիճակը պատվաստվելուց հետո: Յուրաքանչյուր երեխա պետք է գրանցվի առանձին: **V-safe** -ի բոլոր տեքստային հաղորդագրությունները ուղարկվում են ծնողի կամ խնամակալի սմարթֆոնին:

Մի՛ օգտագործեք VAERS-ը և V-safe-ը բժշկական խորհրդատվության համար: Կապ հաստատեք ձեր բժշկի հետ կամ դիմեք բուժօգնության, եթե ձեր երեխան ունի ախտանիշներ կամ առողջական խնդիրներ, որոնք COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո անհանգստացնում են ձեզ:

Ինչպե՞ս գրուցեմ իմ երեխայի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին

Երիտասարդ անձանց համար կարևոր է իմանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութերի մասին փաստերը: Համացանցում և սոցիալական ցանցերում կա շատ ապատեղեկատվություն COVID-19-ի և պատվաստանյութերի վերաբերյալ: Խոսեք ձեր երեխաների հետ COVID-19-ի մասին և պատասխանեք նրանց մոտ ծագած բոլոր հարցերին:

Տեղեկացրեք նրանց COVID-19-ով վարակվելու դեպքում առողջությանը սպառնացող վտանգների մասին, և թե ինչպես կարող է պատվաստումն օգնել պաշտպանել նրանց: Բացատրեք, որ պատվաստանյութն անվտանգ է և, որ այն չի պարունակում վիրուս: Քննարկեք դրանց հետ կապված կողմնակի ազդեցությունները և տեղեկացրեք նրանց, որ դրանք բնական երևույթ են: Հանգստացրեք նրանց, եթե նրանք նյարդային են պատվաստման պատճառով:

Հիշեցրեք նրանց, որ պատվաստվելը կօգնի պաշտպանել իրենց ընտանիքի անդամներին և ընկերներին: Պատվաստումը նրանց համար ավելի անվտանգ կդարձնի այնպիսի զբաղմունքները, ինչպիսիք են սպորտը, ընկերների հետ շփումը և ընտանիքին այցելելու նպատակով ճանապարհորդությունը:

Եթե նրանք հարցեր կամ մտահոգություններ ունեն, թող խոսեն լավատեղյակ, վստահելի մարդու, օրինակ՝ ընտանեկան բժշկի կամ մանկաբույժի հետ:

